ասպարէզը մնաց յոյներին։ — «հոյնը անհաւատարիմ է», ասում է թուրքը, եւ նրա վրայ վստահութիւն չունի, նրան գործ չէ յանձնում։ Դա իրաւ է։ Որովհետեւ յոյնը այնքան մեծամիտ է, որ նա չէր կարող հայի պէս իրան այնքան ստորացնել, որ կարող լինէր հաշտոել իր ատելի թշնամու հետ, — իր երկիրը տիրողի եւ իր ազգակիցներին ստրկացնողի հետ։ Այս պատճառով յոյն դրամատէրերը չուզեցին ամիրաներ, սառաֆներ եւ տէրութեան կապալառուներ դառնալ. նրանք ձեռք առին ազատ վաճառականութիւնը, սկսեցին երկրի արդիւնաբերութիւնը դուրս հանել եւ դրսից ներս բերել։ Եւ ահա այսօրոայ օրում Տաճկաստանի ընդարձակ վաճառականութիւնը նրանց ձեռքումն է։

— Բայց հայերը բոլորովին զուրկ չեն վաճառականութիւնից, — կտրեցի ես Ասլանի խօսքը։

— Այն քո տեսածը վաճառականութիւն չէ, — պատասխանեց նա, — այն մի տեսակ վաշխառութիւն է, որով պարապւում են հրէաները։ Վեր առնենք, օրինակ, Վանայ նահանգը, որը ձեզ փոքր ի շատէ ծանօթ է, քննելով այստեղի վաճառականների գործունէութիւնը, դուք կը տեսնէք միեւնոյնը, ինչ որ անում են մայրաքաղաքներում մեր խոշոր դրամաերերը։ Զանազանութիւնը միայն նրանումն է, որ դրանք մանր հարստահարողներ են, այլ խօսքով, փոքրիկ աւազակներ են, իսկ նրանք — մեծ։ Մեր գիւղացիները միշտ փողի կարօտութիւն ունեն հարկեր վճարելու համար եւ այլ կենսական պահանջների համար։ Փողը նրանք ստանում են վաճառականից, ի հարկէ, ծանր տոկոսներ վճարելով։ Գիւղացիները նոյնպէս պարտքով գնում են վաճառականից իրանց տան, հագուստի եւ այլ հարկաւորութեանց վերաբերեալ իրեղէնները։ Գալիս է պարտքը վճարելու ժամանակը. գիւղացին փող չունի որ տայ, վաճառականը յափշտակում է նրա բոլոր երկրագործական արդիւնքը կէս գնով։ Այսպիսի աւազակները կը ցանկանա՞ն, որ գիւղացու վիճակը բարւոքոի, կը ցանկանա՞ն, որ նա փողի կարօտութիւն չունենայ։ Աւելացնենք դրա վրայ քրդի, թուրքի, տէրութեան հարկահանների հարստահարութիւնները. — խե՜ղճ գիւղացին ինչո՞վ կարող է այս բոլորին բաւականութիւն տալ։ Նրա երկրագործութիւնը դեռ իր նահապետական ձեւի մէջն է, աւելի արդիւնք չէ տալիս։ Նա արհեստ չգիտէ, որ իր ձեռքի արդիւնաբերութիւնը մշակուած կերպով վաճառահանէ դէպի օտար երկրներ։ Այլեւս ինչո՞վ կարող է նա իր ընտանիքը պահել, երբ իր աշխատութեան այն փոքրիկ վաստակն եւս ձեռքիցը խլում են։ Ահա այստեղից է ծագում այն տխուր երեւոյթը, որ մեր ժողովուրդը հայրենի հողի վրայ իր ապրուստը ճարելու հնարներ չունի։ Նրա աշխատութեան արդիւնքը նրա ձեռքից խլում են. նա մնում է միշտ աղքատ եւ միշտ առանց հացի, եւ այդ պատճառով ստիպուած է թողնել հայրենի հողը եւ